

**ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՍԻԱՅՈՒՄ
ԹՈՒՐՔԻԱՅԻ ԵՎ ԻՐԱՆԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱ-
ՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ
ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՇՈՒՐՋ**

Խորհրդային Միության փլուզումից հետո Կենտրոնական Ասիայում առաջացան հինգ նորանկախ հանրապետություններ (Ղազախստան, Թուրքմենստան, Ուզբեկստան, Ղրղզստան, Տաջիկստան), որոնք, ազատվելով խորհրդային վերահսկողությունից, փորձում էին ինտեգրվել միջազգային հարաբերությունների համակարգին: Կենտրոնասիական տարածաշրջանը կարևորվում է իր ռազմավարական և աշխարհագրական դիրքով, ուստի նրա նկատմամբ անմիջապես մեծ հետաքրքրություն նկատվեց: Խորհրդային կարգերի վերացումից հետո առաջացել էր վակուում, որտեղ քաղաքական ազդեցության էին փորձում հասնել ԱՄՆ-ն, Եվրոպական երկրները, Չինաստանը, Թուրքիան, Իրանը և ուրիշներ: Կենտրոնասիական տարածաշրջանի նկատմամբ առավել ակտիվ քաղաքականություն որդեգրեցին Թուրքիան և Իրանը: Վերջիններիս դեպքում տարածաշրջանում ազդեցության հասնելու համար մի նոր հնարավորություն էր ստեղծվել, ինչն էլ նրանք փորձում էին օգտագործել: Նման պայմաններում Կենտրոնական Ասիայում թուրք-իրանական հարաբերություններն ունեին մրցակցային բնույթ, որը տարածվում էր քաղաքական, տնտեսական և մշակութային բնագավառներում:

Հոդվածում փորձ է արվում ներկայացնելու Կենտրոնական Ասիայում Թուրքիայի և Իրանի մշակութային քաղաքականության մի քանի առանցքային հիմնախնդիրները, առանձնահատկությունները և նպատակները: Անդրադարձ է կատարվում Թուրքիայի և Իրանի կրթական, լեզվական և մշակութային միջոցառումների իրականացման քաղաքականությանը, որոնք երկու երկրնե-

րի կողմից դիտարկվում էին կարևոր գործընթացներ տարածաշրջանում ազդեցության հաստատման խնդրում: Հատկանշական է կենտրոնասիական տարածաշրջանի հետ այս երկրների ունեցած պատմական և մշակութային ընդհանրությունները, որոնք էլ հանդիսանում են կրթամշակութային քաղաքականության համապատասխան հիմքը: Հասկանալու համար Թուրքիայի և Իրանի մշակութային քաղաքականության յուրահատկությունները անհրաժեշտ է դիտարկման ենթարկել առանձին խնդիրներն ու ձեռնարկումները, որոնք այս երկրների գործողություններում առանցքային տեղ են գրավել՝ փորձելով տալ դրանց գնահատականը:

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՍԻԱՅՈՒՄ

Թուրքիան Կենտրոնական Ասիայի երկրների հետ սկսեց համագործակցել Խորհրդային Միության փլուզումից անմիջապես հետո, որն, ըստ էության, արտահայտվեց դիվանագիտական հարաբերությունների հաստատմամբ, փոխադարձ բարձրաստիճան այցելություններով և բազմաթիվ համագործակցային պայմանագրերի ստորագրմամբ: Թուրքական կառավարությունը հենց սկզբից մեծ ուշադրություն դարձրեց մշակութային համագործակցությանը, որն անգամ ընդգծվեց Թուրքիայի պետական պլանավորման վեցերորդ ծրագրում¹: Փաստորեն 1990–ական թթ. սկզբից Թուրքիան իր առջև խնդիր էր դրել կենտրոնասիական տարածաշրջանում հասնելու ազդեցության, ուստի այդ նպատակով իրականացվող քաղաքականության համատեքստում կարևորվեց նաև մշակութային համագործակցությունը:

Նախևառաջ Թուրքիան իր մշակութային քաղաքականությամբ սկսեց բարձրաձայնել ու ընդգծել կենտրոնասիական երկրների հետ ունեցած էթնիկական, պատմական, լեզվական, կրոնական և մշակութային ընդհանրությունները: Ըստ էության՝ Թուրքիան նպատակ ուներ տարածելու թյուրքական մշակութային և փորձում էր հասնել մշակութային միասնության: Այս նկատառումներով մեծ տեղ հատկացվեց «Թյուրքական մշակույթի և արհեստների միացյալ ղեկավարում» (Türk Kültür ve Sanatları Ortak Yonetimi–TÜRKSOY) կազմակերպությանը, որը ստեղծվել էր

¹ Altıncı Beş yıllık kalkınma planı (1990–1994), Ankara, 1989, s. 293, <http://ekutup.dpt.gov.tr/plan/plan6.pdf>

Մշակույթի նախարարությանը կից 1993 թ. հուլիսին²: Ընդհանրապես թյուրքալեզու երկրների հետ մշակութային հարաբերությունների զարգացմամբ հիմնականում զբաղվում էր մշակույթի նախարարությունը: Կարճ ժամանակահատվածում TÜRKSOY-ը ներկայացուցչություններ բացեց կենտրոնասիական երկրներում և տարածաշրջանում իրականացնում է ակտիվ գործունեություն, թերևս ավելի սահմանափակ է գործում Տաջիկստանում³: TÜRKSOY-ը կազմակերպում է բազմաթիվ միջոցառումներ, այդ թվում գիտական ու մշակութային նստաշրջաններ, գիտաժողովներ, ցուցահանդեսներ, իրականացնում է տարբեր տեսակի ծրագրեր, որոնք հիմնականում կապում է թյուրքական աշխարհում տեղի ունեցած կարևոր իրադարձությունների հետ⁴: Նման միջոցառումների ու ծրագրերի իրականացմամբ Թուրքիան փորձում է թյուրքալեզու երկրների հետ հարաբերություններում կարևորել համաթյուրքական մշակութային ավանդույթներն ու սովորույթները:

Կենտրոնական Ասիայում Թուրքիայի մշակութային քաղաքականության մաս են կազմում տասնյակ խորհուրդների ու ֆոնդերի հիմնադրումը, որոնք հիմնականում զբաղվում են մշակութային ու կրթական հարցերով⁵: Տարածաշրջանում առավել ակտիվ գործունեություն է ծավալում Թյուրքական աշխարհի հետազոտությունների հիմնադրամը (Türk Dünyası Araştırmaları Vakfı)⁶: Հարկավ նմանատիպ կառույցների ստեղծումը միտված է համաթյուրքական մշակութային արժեքների պահպանմանը և տարածմանը:

Թյուրքալեզու երկրների նկատմամբ Թուրքիայի մշակութային քաղաքականության մեջ առանձնակի ուշադրություն հատկացվեց կրթական համակարգին: Թյուրքական ղեկավարությունն իր գործունեությունը բաժանեց մի քանի ուղղությունների՝ թյուրքալեզու երկրներում հիմնում էր դպրոցներ ու համալսարաններ,

² TÜRKSOY-ի գործունեության բնագավառների և նպատակների մասին ավելի մանրամասն տե՛ս կազմակերպության պաշտոնական կայքէջը՝ <http://www.turksoy.org.tr/tr/turksoy/faaliyetler>

³ TÜRKSOY-ի գրասենյակներ են գործում Ղազախստանում, Ղրղզստանում, Թուրքմենստանում, Ուզբեկստանում, Ադրբեջանում և այլ վայրերում: Ավելի մանրամասն տե՛ս TÜRKSOY-ի պաշտոնական կայքէջը՝ <http://www.turksoy.org.tr/tr/uyeler>

⁴ Yedinci Beş yıllık kalkınma planı (1996–2000), s. 31, <http://ekutup.dpt.gov.tr/plan/vii/plan7.pdf>

⁵ Yazgan Turan, Türkiye'nin Türk Dünyasındaki eğitim-öğretim faaliyetleri, Kamu-İş, Cilt 7, Sayı 2, 2003, s. 2–21.

⁶ Նույն տեղում, էջ 3:

թուրքական բուհերում կազմակերպում էր կենտրոնասիական երիտասարդների մասնագիտական ու բարձրագույն ուսումնառությունը և աշխատանքներ էր իրականացնում ընդհանուր այբուբենի հաստատման ուղղությամբ⁷: Կենտրոնական Ասիայի թյուրքալեզու երկրներում Թուրքիան հիմնադրեց ավագ դպրոցներ, լիցեյներ, համալսարան ընդունվելու համար նախապատրաստական կուրսեր, իսլամական կրթության կենտրոններ և համալսարաններ⁸: Բավական է նշել, որ տարածաշրջանում գործում են թուրքական ութ համալսարաններ, որոնցից չորսը պատկանում է Ֆ. Գյուլենի համայնքին⁹, ինչպես նաև տասնյակ ավագ դպրոցներ, օրինակ՝ Ղրղզստանում գործում են 13 ավագ դպրոցներ, Ղազախստանում՝ 27, Թուրքմենստանում՝ ավելի քան 20 և Ուզբեկստանում՝ 25¹⁰: Թուրքիան մեծ տեղ հատկացրեց նաև կրոնական կրթությանը՝ նախևառաջ աջակցելով Կենտրոնական Ասիայում գյուլենական շարժման կողմից հիմնադրված ուսումնական հաստատություններին¹¹: Մյուս կողմից՝ Թուրքիայի նախաձեռնությամբ տարածաշրջանում հովանավորվում էր մզկիթների ու մեդրեսների շինարարությունը¹², տարածվում էր կրոնական գրականություն, անգամ բացվեցին աստվածաբանության ֆակուլտետներ՝ Ադրբեջանում, Ղրղզստանում և Թուրքմենստանում¹³: 1990–ական թթ. սկզբից մինչև օրս հարյուրավոր երիտասարդներ կրթություն են ստանում Թուրքիայի համալսարաններում և այլ ուսումնական հաստատություններում¹⁴: Վերո-

⁷ Bayram Sinkaya, Turkey–Iran Geopolitical Competition over Central Asia and The Caucasus: 1989–2001, Avrasya Etüdleri, Sayı 27–28, Sonbahar–Kış 2005, p. 80.

⁸ Ն. Մինասյան, Կրթամշակութային հարաբերությունները Թուրքիայի և Կենտրոնական Ասիայի թյուրքալեզու երկրների միջև (1990–ական թթ.), Մերձավոր Արևելք, հ. VIII, Երևան, 2012, էջ 290–291:

⁹ Bill Park, The Fethullah Gulen Movement, The Middle East Reviv of International Affairs, vol. 12, no. 3, September 2008, <http://www.merajournal.com/en/asp/journal/2008/december/park/index.asp>, Ն. Մինասյան, Ֆեթուլլահ Գյուլենի գործունեությունը Կենտրոնական Ասիայի թյուրքալեզու հանրապետություններում, Լրաբեր հասարակական գիտությունների, 1 (637), Երևան, 2013, էջ 228–237:

¹⁰ Turkish Ministry of Education, <http://www.meb.gov.tr/Stats/ist97/MYHTML45.htm>, Bülent Aras, Turkey's Policy in the Former Soviet South: Assets and Options, Turkish Studies, 1:1, 2000, p. 36–58.

¹¹ Bayram Balci, Fethullah Gülen's Missionary Schools in Central Asia and their Role in the Spreading of Turkism and Islamism, Religion, State & Society, vol. 31, no. 2, 2003, p. 151–177.

¹² Farhad Ataei, Iran and Turkey in Post–Soviet Central Asia, An Iranian Quarterly, vol. 2, no. 1, Summer 2000, p. 153.

¹³ Bayram Sinkaya, Turkey–Iran Geopolitical Competition over Central Asia and The Caucasus: 1989–2001, p. 81.

¹⁴ Philip Robins, Between Sentiment and Self–Interest: Turkey's Policy toward Azerbaijan and Central Asian States, Middle East Journal, 47, Autumn, 1993, p. 598.

շարադրյալից կարող ենք եզրակացնել, որ Թուրքիան կենտրոնասիական երկրների հետ փորձում էր ձևավորել միասնական կրթական համակարգ:

Թուրքիան թյուրքալեզու երկրներում ուշադրություն դարձրեց նաև թուրքերենի տարածման խնդրին, որն արտահայտվեց ընդհանուր այբուբենի հաստատման կոչով՝ նկատի ունենալով լեզվական ընդհանրությունները: 1993 թ. մարտին Անկարայում տեղի ունեցած Թյուրքախոս երկրների գագաթնաժողովում ընդունվեց ընդհանուր այբուբենի մասին որոշումը, որը լատինատառ էր և կազմված էր 34 տառից¹⁵: Այբուբենը քննարկվում և մշակվում էր Թյուրքագիտական հետազոտությունների ինստիտուտում, որը ստեղծվել էր Ստամբուլի Մարմարա համալսարանին կից: Հարկավոր է փաստել, որ այբուբենը փոխելու Թուրքիայի կոչերին թյուրքալեզու երկրները միանշանակ չպատասխանեցին: Կենտրոնասիական երկրներից առաջինը լատինատառ այբուբենին անցավ Թուրքմենստանը, այնուհետև Ուզբեկստանը և Ղազախստանը, սակայն վերջին երկու երկրները, լեզվական որոշ անհարթություններ նկատի ունենալով, ընդունեցին սեփական լատինատառ այբուբենները: Ղրղզստանը թյուրքալեզու երկրներից միակն է, որ դեռևս օգտագործում է կիրիլյան այբուբենը¹⁶: Ըստ էության՝ Թուրքիան, այբուբենը լատինականացնելով փորձում էր տարածաշրջանում ապահովել թուրքերենի գերակայությունը, ինչն էլ հնարավորություն կընձեռեր հաստատելու միասնական կրթական ու մշակութային համակարգ: Այս նկատառումով Թուրքիան ուշադրություն դարձրեց նաև հեռուստառադիո հաղորդումների պատրաստմանը և դրանք Կենտրոնական Ասիայում հեռարձակելուն¹⁷, անգամ ստեղծվեց հատուկ ծրագիր՝ “Avrasya”, որը 1992 թ. հեռարձակվեց կենտրոնասիական բոլոր հանրապետություններում: Հեռարձակվող հաղորդաշարերում մեծ տեղ էր հատկացվում համաթյուրքական պատմության ու մշակույթի ներկայացմանը: Անշուշտ նման ծրագրերով փորձ էր կատարվում նպաստելու համաթյուրքական մշակութային արժեքների տարածմանը¹⁸:

¹⁵ А. Сваранц, Пантюркизм в геостратегии Турции на Кавказе, М., 2002, с. 167.

¹⁶ Kara Mehmet, Türk Cumhuriyetleri ve otuz dört harfli ortak Latin alfabesi, Turkish Studies, International for the Languages, Literature and History of Turkish or Turkic, vol. 4/3, Spring 2009, s. 1307.

¹⁷ Martha Brill Olcott, Central Asia's Catapult to Independence, Foreign Affairs, №71, Summer 1992, p. 121–122.

¹⁸ Heinz Kramer, Will Central Asia Become Turkey's Sphere of Influence, Perception: Journal of International Affairs, March–May, 1996, <http://www.sam.gov.tr/perception/>

Այսպիսով՝ Կենտրոնական Ասիայում Թուրքիան ազդեցության հասնելու համար մեծ տեղ հատկացրեց մշակութային բնագավառին: Իր մշակութային քաղաքականությամբ Թուրքիան փորձում է ձևավորել միասնական մշակութային հանրություն, որին բնորոշ կլինի ընդհանուր ծագման մասին գաղափարը, պատմությունը, ավանդույթները, լեզուն և ինքնագիտակցությունը: Հարկավոր է նշել, որ Թուրքիայի իրականացրած որոշ ծրագրեր հաջողություններ չունեցան, ուստի որոշ ոլորտներում նրա քաղաքականությունը ձախողվեց: Ըստ էության՝ ավելի տեսանելի արդյունքներ Թուրքիան ունեցավ կրթության բնագավառում: Վերոշարադրյալից կարող ենք փաստել, որ Թուրքիան ունեցավ որոշ ձեռքբերումներ և կարողացավ տարածաշրջանում հաստատել իր ներկայությունը:

ԻՐԱՆԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՍԻԱՅՈՒՄ

Իրանը Կենտրոնական Ասիայի երկրների հետ ունի ավանդական պատմական մշակութային և քաղաքակրթական կապեր, որոնք ձևավորվել են դարերի ընթացքում: Այս հենքի վրա Իրանը փորձեց հետխորհրդային Կենտրոնական Ասիայում ակտիվ դերակատարում ստանձնել՝ օգտվելով ստեղծված աշխարհաքաղաքական իրադրությունից: Պետք է նշել, որ քաղաքական տեսանկյունից կենտրոնասիական երկրների հետ համագործակցությունը բխում էր Իրանի շահերից, քանի որ վերջինս կկարողանար ամրապնդել իր հյուսիսային շրջանների անվտանգությունը: Իրանը ամեն կերպ փորձում էր նպաստել Կենտրոնական Ասիայի երկրներում կայունության ու անվտանգության հաստատմանն ու պահպանմանը:

Իրանը կենտրոնասիական տարածաշրջանում ազդեցության հասնելու համար մեծ տեղ հատկացրեց մշակութային քաղաքականությանը՝ փորձելով հասնել մշակութային գերակայության: Նա սկսեց ակտիվորեն քարոզել կենտրոնասիական երկրների հետ ունեցած ընդհանուր մշակութային ժառանգությունը: Այս համատեքստում Իրանում հատկապես ուշադրություն դարձրեցին մշակութային վերածննդի գաղափարին, որը փաստորեն կդառնար այս երկրների անկախության ու ինքնուրույնության կարևոր

գրավականներից մեկը, իսկ Իրանը ցույց կտար համապատասխան աջակցություն¹⁹: Հենց այս խնդիրներն էլ դրվեցին Իրանի կենտրոնասիական քաղաքականության հիմքում: Ըստ էության՝ Իրանում քարոզում էին սեփական ավանդական մշակութային տարրերը, մասնավորապես շեշտը դրվում էր իրանական դասական մշակույթի վրա, որը հարազատ էր նաև տարածաշրջանի ժողովուրդներին²⁰: Փաստորեն Իրանը կենտրոնասիական երկրների հետ մշակութային համագործակցության հիմքում դրեց ընդհանուր մշակութային ավանդույթների գաղափարը: Այս առումով անհերքելի է այն փաստը, որ կենտրոնասիական տարածաշրջանում գոյություն ունեցող մշակույթի ու քաղաքակրթության վրա մեծ է եղել Իրանի ազդեցությունը²¹: Բավական է միայն նշել, որ տեղական լեզուներում կան բազմաթիվ պարսկերեն բառեր, իսկ տեղի բնակչությունը մինչև օրս էլ օգտագործում է պարսկական ասույթներ ու բանաստեղծություններ, ինչպես նաև կան ընդհանուր ավանդույթներ ու տոներ, որոնք հիմնականում ձևավորվել են իսլամի ազդեցությամբ: Հատկանշական է, որ Կենտրոնական Ասիայում Իրանի իրականացրած մշակութային քաղաքականությունը ենթադրում էր վերադառնալ սեփական մշակութային արմատներին, որոնց հետ իրանական մշակույթն ուներ բազում ընդհանրություններ: Բացի այդ Իրանում կարևորեցին մշակութային ժառանգությունը, քանի որ առկա ընդհանրությունները վերաբերում էին հիմնականում այս բնագավառին²²: Իրանական կողմի կարծիքով նման համագործակցությունը

¹⁹ В. Варнавский, Иран и государства Центральной Азии: генезис, состояние и перспективы сотрудничества, Центральная Азия и Кавказ, No. 2(56), 2008, с. 146.

²⁰ Իրանի կողմից լայնորեն տարածվում էր միջնադարյան մշակութային ավանդույթներն ու ժառանգությունը, մասնավորապես մեծ տեղ էր հատկացում Ֆիրդուսիի պոեզիային: Հատուկ տեղ էր հատկացվում նրա էպոսին, որը մեծ տեղ էր գրավում նաև Կենտրոնական Ասիայի ժողովուրդների ազգային մշակույթների մեջ: Պարսկական կրթական համակարգի ազդեցության շնորհիվ 15–17-րդ դարերում կենտրոնասիական բազմաթիվ հեղինակներ գրում էին պարսկերեն: Հայտնի մտածողներ, որոնք ծնվել են Կենտրոնական Ասիայի տարածքում ճանաչվել են իրանա-մուսուլմանական մշակույթի հայտնի դեմքեր: Օրինակ՝ համաշխարհային մակարդակով կարող ենք առանձնացնել Ռուդաքին, Ուլուգբեկին, իբն Սինային, Նասեր Խոսրովին և այլոց, որոնք նախևառաջ հայտնի են որպես պարսիկ գործիչներ:

²¹ М. Санаи, Взаимоотношения Ирана и стран Центральной Азии, Алматы, 1997, с. 15.

²² В. Кляшторина, Эволюция роли культуры в процессе модернизации Ирана и стран региона: особенности модернизации на мусульманском Востоке, М., 1997, с. 156–158.

կարող է հիմք հանդիսանալ նախկին հարաբերությունների վերականգնման համար, ուստի փորձում էին շեշտել ընդհանուր մշակութային ներուժը և ընդհանուր ժառանգությունը: Այսպես՝ Կենտրոնական Ասիայի երկրներում պահպանվել է տարածաշրջանի գրային մշակույթը, օրինակ Տաջիկստանի Հանրապետության Գիտությունների Ակադեմիայի արևելյան ձեռագրերի միայն մեկ ֆոնդում պահպանվել են ավելի քան 56 հազար ձեռագրեր, որոնք վերաբերում են 10–20–րդ դարերին և դրանց ուսումնասիրությունը կարևոր է ինչպես այդ երկրների, այնպես էլ Իրանի գիտության, մշակույթի, պատմության և գրականության ուսումնասիրման համար²³: Իրանական ղեկավարությունը փորձում էր լայնորեն տարածել այն գաղափարը, որ իրանական մշակույթը ոչ թե այդ ժողովուրդների հոգևոր մշակույթի մի մասն է, այլև նրանց պատմամշակութային ժառանգության հենքն է: Նկատի ունենին, որ կենտրոնասիական տարածքները պատմական տարբեր ժամանակաշրջաններում ընդգրկված են եղել իրանական պետական կազմավորումների մեջ, ուստի այս կամ այն չափով ենթարկվել են իրանական մշակութային ազդեցությանը: Այսինքն՝ այս տարածաշրջանը պատմականորեն կապված է Իրանի հետ, ինչը չենք կարող ասել Թուրքիայի դեպքում:

1992 թ. Իրանը դիվանագիտական ներկայացուցչություններ բացեց Կենտրոնական Ասիայի բոլոր հանրապետություններում, որոնցում հատուկ աշխատակիցը զբաղվում էր մշակույթի, կրթության և գիտության հարցերով, ավելին, մշակույթի նախարարության աջակցությամբ տարածաշրջանում բացվեցին մշակութային կենտրոններ, որոնք սերտորեն համագործակցում էին իրանական դեսպանատների հետ և քարոզում էին մշակութային ժառանգության մասին՝ հենվելով պատմական ընդհանուր կապերի և փոխառնչությունների վրա: Իրանը մշակութային քաղաքականությամբ հիմնականում ուշադրություն է դարձնում լեզվին, պատմությանը, գրականությանը և կրոնին²⁴:

Կենտրոնասիական տարածաշրջանում Իրանի իրականացրած մշակութային քաղաքականության մեջ տեղ հատկացվեց կրոնին, անգամ ակտիվորեն քարոզվում էին իսլամական արժեքներ: Սակայն նրա այս ձեռնարկումները հաջողված չի կարե-

²³ В. Месамед, Иран в Центральной Азии: два десятилетия диалога, М., 2010, с. 41.

²⁴ У. Джонстон, Культурная политика Ирана в республиках Центральной Азии и Южного Кавказа после 1991 года, Центральная Азия и Кавказ, No 4(52), 2007, с. 126–140.

լի համարել, քանի որ կենտրոնասիական երկրներում նման գաղափարներին տուրք չեն տալիս, ավելին երբեմն շատ կոշտ են պատասխանում: Այսպես, 1993 թ. ապրիլին Տաշքենդում կազմակերպվել էր իսլամական մշակույթի վերաբերյալ ցուցահանդես, որը Ուզբեկստանի կառավարության կողմից արգելվեց և անգամ սպառնում էին փակել մշակութային բոլոր կենտրոնները: Պետք է նշել, որ Ուզբեկստանում թե՛ Թուրքիայի և թե՛ Իրանի իրականացրած նման գործողություններին շատ կոշտ են պատասխանում: Կարծում ենք Իրանը այս հարցում չի կարող հաջողություններ ունենալ, քանի որ թյուրքալեզու երկրները դավանում են իսլամի սուննի ուղղությունը:

Իրանը, հետևելով Թուրքիայի օրինակին, փորձեց տարածաշրջանում տարածել արաբա-պարսկական այբուբենը: Ըստ էության՝ Իրանում ևս փորձում էին ստեղծել միասնական այբուբեն, որի հաստատման պայմաններում տարածաշրջանում կապահովվեր պարսկերենի գերակայությունը: Պետք է փաստել, որ Իրանը լեզվական ընդհանրություններ ուներ միայն Տաջիկստանի հետ, հետևաբար նա հաջողություններ ունեցավ միայն Տաջիկստանում²⁵: Իսկ թյուրքալեզու երկրներն ավելի շատ հակված էին թյուրքական լատինատառ այբուբենի ընդունմանը:

Իրանը պարսկերենի ուսուցումը քարոզում էր նաև թյուրքալեզու երկրներում: Այս տեսանկյունից նա թյուրքալեզու երկրներում աջակցում էր ուսումնական ձեռնարկների ու բառարանների հրատարակմանը: Թեհրանի և Ղրղզստանի ազգային համալսարանների գիտնականների համագործակցության արդյունքում 1990-ական թթ. սկզբին հրատարակվեցին առաջին պարսկերեն-ղրղզերեն և �ղրղզերեն-պարսկերեն բառարանները: Չնայած Իրանի և Թուրքմենստանի միջև դարերի ընթացքում գոյություն ունեցած պատմամշակութային կապերին՝ 1966 թ. դադարեցվել էր պարսկերենի ուսումնասիրումը, որը վերականգնվեց 1990 թ.: Այստեղ, բացի ուսումնական ձեռնարկների ու բառարանների հրատարակումից, բացվեցին նաև պարսկերենի և պարսկական գրականության ուսումնասիրման դպրոցներ: Նման ծրագրերից անմասն չմնաց նաև Ուզբեկստանը: Իրանի տեխնիկական ու ֆինանսական աջակցությամբ հրատարակեցին պարսկերենի ձեռնարկներ և ժամանակակից ուզբեկական գրական ստեղծագործություններ: Իրանի ԱԳՆ-ի քաղաքական ու միջազգային

²⁵ Farhad Kazemi and Zohreh Ajdari, Ethnicity, Identity and Politics Central Asia and Azerbaijan between Iran and Turkey, Central Asia Meets the Middle East, Ed. by David Menashri, 1998, p. 59–60.

հետազոտությունների կենտրոնի աջակցությամբ պարսկերեն հրատարակվեցին Ուզբեկստանի նախագահ Իսլամ Բարիմովի մի շարք աշխատություններ, մասնավորապես տնտեսական բարեփոխումներին նվիրված նրա գիրքը, որի առաջաբանը գրել է Տաշքենդում Իրանի նախկին դեսպան Մոհսեն Պակ-Այիինը:

Իրանն աջակցում էր նաև թյուրքալեզու երկրներում իրանագիտության ամբիոնների բացմանը: Այսպես՝ Բիշկեքի երեք համալսարաններում՝ Ղրղզա-սլավոնական, Ազգային և Հումանիտար, բացվեցին իրանագիտության ամբիոններ, որոնց Իրանը տրամադրեց մասնագիտական գրականություն և արդիական տեխնիկա: Նման ամբիոններ բացվեցին նաև Ղազախստանում, Թուրքմենստանում և Ուզբեկստանում: Այս երկրներում բացվեցին նաև իրանական մշակույթի ու լեզվի ուսումնասիրման կենտրոններ:

Իրանական ղեկավարությունը նույնպես ուշադրություն դարձրեց տարբեր մասնագետների, մասնավորապես իրանագետների պատրաստման խնդրին. այստեղ ևս փորձում էին կենտրոնասիական երիտասարդության ուսումնառությունը կազմակերպել իրանական ուսումնական հաստատություններում: Այս հարցում ևս Իրանի ձեռքբերումները մեծ չեն, քանի որ երիտասարդները նախընտրում են կրթություն ստանալ արտասահմանում կամ Թուրքիայում:

Մշակութային գերակայությունն ավելի ընդգծվեց Իրանի և Տաջիկստանի հարաբերություններում, որտեղ բնակչության մեծամասնությունը խոսում է պարսկերենին մոտ տաջկերենով և իրեն համարում է իրանալեզու աշխարհի մի մասը: Երկու երկրների հարաբերությունների գաղափարական հիմքում ընկած է Տաջիկստանի կողմից ընդունված այն փաստը, որ «Ժամանակակից Իրանի Իսլամական Հանրապետությունը և Տաջիկստանի Հանրապետությունը երբեմնի միասնական արիական քաղաքակրթության ժառանգներն են»²⁶: Սա ինչ-որ տեղ նման է Թուրքիայի քարոզած ընդհանուր ծագման գաղափարներին: 1990-ական թթ. սկզբից Իրանի կողմից Տաջիկստանին տրված օգնությունը հիմնավորվում էր այն հանգամանքով, որ վերջինս համարվում էր տարածաշրջանում Իրանի դաշնակիցը: Հատկանշական է, որ առաջինը Տաջիկստանում փորձեցին ամրապնդել իրանական մշակութային ազդեցությունը: Այսպես, Տաջիկստանում հիմնադրվել և ակտիվորեն գործում են իրանական մշակույթի երկու

²⁶ X. Додихудоев, В. Ниятбеков, Таджикистан–Иран: Достижения и перспективы сотрудничества, Центральная Азия и Кавказ, No 2(56), 2008, с. 154.

կենտրոններ, որոնցից մեկը մայրաքաղաք Դուշանբեյում է, իսկ մյուսը՝ երկրի հյուսիսում՝ Խուջանգում: Վերջինը սկսել է աշխատել 2010 թ., որտեղ կա գրադարան և անցկացվում են պարսկերեն լեզվի, պատմության ու մշակույթի վերաբերյալ դասընթացներ²⁷: Նկատվում է նաև իսլամական գաղափարների տարածում, ուստի մեծ տեղ է հատկացվում Ղուրանի ուսուցմանը, անգամ ստեղծվել և գործում են սուրբ գրքի ուսումնասիրման խմբեր: Տաջիկստանում Իրանն ուշադրություն է դարձնում նաև բարձրագույն կրթությանը, մասնավորապես տարբեր բուհերում գործում է իրանական մշակույթի 17 անկյուններ: Տաջիկստանում 2008 թ. սեպտեմբերի 1-ից բոլոր հանրակրթական դպրոցներում սկսեցին դասավանդել նոր առարկա՝ իսլամական կրթություն: Լայնորեն տարածված են նաև իրանական հեռուստառադիո հաղորդաշարերը: Տաջիկստանում Իրանի իրականացրած մշակութային նախագծերից է նաև տարբեր հրապարակումների ֆինանսավորումը, այսպես հրատարակվում են պարսկական դասականների ստեղծագործությունները, Արևելքի պատմության վերաբերյալ գրքեր, բառարաններ, կրոնական գրականություն և այլն: Իրանական կողմն անգամ ֆինանսավորեց «Տաջիկական ժողովրդի պատմությունը» երկհատոր աշխատությունը, որը գրվել էր խորհրդային շրջանում անվանի արևելագետ և պետական գործիչ ակադեմիկոս Բաբաջան Գաֆուրովի կողմից: Նշենք, որ բավականին ակտիվորեն զարգանում են նաև իրանա-տաջիկական առևտրատնտեսական հարաբերությունները: Չնայած վերոնշյալ ակտիվ գործունեությանը՝ Տաջիկստանն իր արտաքին քաղաքականության բնագավառում Իրանին առանցքային տեղ չի հատկացնում: Այս մասին նշել է Տաջիկստանի նախագահ Իմամալի Ռահմոնովը 2006 թ. նոյեմբերի 18-ին արված հայտարարության մեջ, երբ նա ընդգծեց, որ իր երկիրն առաջինը կհամագործակցի Ռուսաստանի, ԱՄՆ-ի և ԵՄ-ի, այնուհետև կենտրոնասիական երկրների և վերջում միայն Աֆղանստանի և Իրանի հետ²⁸:

Իրանը տարածաշրջանի երկրներում կազմակերպում է մշակութային շաբաթներ ու ցուցահանդեսներ, հատկապես մանրանկարչության ու գեղագրության թեմատիկայով: Արվեստի այս ճյուղերը տարածաշրջանում շատ բարձր են գնահատվում, օրինակ՝ Ուզբեկստանում գործում են իրանական մանրանկարչության կենտրոններ: Իրանը ևս ուղիղ և հեռուստատեսային հաղորդա-

²⁷ В. Месамед, նշվ. աշխ., էջ 43:

²⁸ Л. Исамова, Рахмонов пообещал продолжить политику открытых дверей, РИА Новости, 18. 11. 2006.

շարեր է հեռարձակում Կենտրոնական Ասիայում: Նման հաղորդաշարերում մեծ տեղ են գրավում մշակութային բնույթի ծրագրերը և լուրերը²⁹, որոնց միջոցով Իրանը փորձում է թարմացնել ընդհանուր մշակութային ժառանգության վերաբերյալ հիշողությունները:

Այդուամենայնիվ Իրանն իր մշակութային քաղաքականության մեջ ևս ընդգրկեց տարածաշրջանի երկրների հետ ունեցած ընդհանրությունները: Նա փորձեց իր ազդեցությունը տարածել ողջ տարածաշրջանում, ուստի միջոցառումներ էր իրականացնում նաև թյուրքալեզու երկրներում: Ըստ էության՝ թյուրքալեզու երկրներում Իրանը տեսանելի ձեռքբերումներ չունեցավ, ուստի նրա քաղաքականությունը հաջողված գնահատել չենք կարող: Մյուս կողմից նա ավելի ակտիվ գործունեություն ծավալեց Տաջիկստանում, որտեղ էլ կարող ենք փաստել իրանական մշակութային ներկայության մասին:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Խորհրդային Միության փլուզումը Թուրքիայի և Իրանի համար կենտրոնասիական երկրների կրթական, մշակութային և մեդիա ոլորտներում ներկայանալու հնարավորություն ստեղծեց: Ըստ էության՝ նրանք ուշադրություն դարձրեցին այդ երկրների հետ ունեցած ընդհանրություններին: Իրանի հետ համեմատած՝ Թուրքիան ավելի մասշտաբային ծրագրեր իրականացրեց՝ միանգամից ուշադրությունը կենտրոնացնելով մի քանի ոլորտների վրա: Սրանով էր պայմանավորված, որ Թուրքիան ավելի տեսանելի ձեռքբերումներ ունեցավ, քան Իրանը: Հատկանշական է, որ տարածաշրջանում Թուրքիային նախևառաջ հետաքրքրում էին թյուրքալեզու երկրները, իսկ Իրանին՝ Տաջիկստանը: Այս տեսանկյունից էլ Թուրքիան հիմնական գործունեությունը կենտրոնացրեց թյուրքալեզու երկրներում, իսկ Իրանը՝ Տաջիկստանում: Պետք է ընդունել, որ տարածաշրջանի մշակութային արմատները բավականին խոր են և թուրքական կամ իրանական ազդեցության հաստատման համար պահանջվում է զգալի ներդրումներ ու երկարատև ժամանակ:

²⁹ John Calabrese, Turkey and Iran: Limits of a Stable Relationship, British Journal of Middle Eastern Studies, vol. 25, May 1998, p. 83–84.